ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետ՝ Բանասիրական

Բաժին՝ Հայոց լեզու և գրականություն

Կուրս՝ Չորրորդ

Թեմա՝ «Ռուբեն Սևակ: Սեր կյանքից անդին»

Ուսանող՝ Աստղիկ Բոյաջյան

Երևան 2018

Ռուբեն Սնակ: Մեր կյանքից անդին

Գրականության մեջ յուրաքանչյուր դարաշրջան առանձնանում է գրական նորանոր դեմքերով և ստեղծագործական մնայուն արժեքներով: Այս առումով պետք է նշել, որ գրական այս կամ այն երկի բնույթն ու բովանդակությունը թելադրվում է տվյալ դարաշրջանին բնորոշ պատմաքաղաքական իրադրությամբ: 20-րդ դարի սկիզբը բեկումնային ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի ողջ պատմության վրա և ճակատագրի սև գծի նման ուղեկցեց դարձավ աշխարհի ծայրերում բնակվող յուրաքանչյուր հայի համար: Այս պատմական ծանր ժամանակաշրջանում հայ գրականության միջուկի տրոհված արևմտահայ հատվածում գրական ասպարեզ իջան երիտասարդ բանաստեղծների մի ողջ աստղաբույլ, ովքեր ստեղծեցին անգնահատելի արժեքներ և դարձան արևմտահայ գրականության մշտարթուն կանթեղները: Այդ գրական աստղաբույլի ամենից պայծառ դեմքերից էր Ռուբեն Սնակը:

Ռուբեն Սնակի պոեզիան առանձնանում է հասարակական տեսանկյունից կենսական նշանակություն ունեցող թեմաների արծարծմամբ: Սնակի համար չկան բանաստեղծական ու ոչ-բանաստեղծական բնագավառներ. նա ամենուրեք է փնտրում ու գտնում գեղեցիկը և գտնում է այն նույնիսկ ամենից հասարակ իրադրություններում: Ռուբեն Սնակը պոռթկումների բանաստեղծ է, որի զարգացման թռիչքը ընդհատվեց հենց բարձրակետում: Սակայն հարց է առաջանում կարելի՞ է Սնակին դնել Վարուժանի, Սիամանթոյի և Մեծարենցի կողքին: Այս առումով նշենք, որ Սնակը ինչ-որ չափով ուներ Վարուժանի աշխարհներ հայտնագործելու ձիրքը, բայց զարգացման արագ տեմպը չուներ: Սնակի բանաստեղծական աշխարհը գնում էր դանդաղ զարգացման և որոնումների ճանապարհով, իհարկե, այդ ճանապարհին հայտնություններ անելով: Սակայն հայրենասիրական և քաղաքական թեմաներով գրված գործերում Հայաստանի տիպի խտացման այնպիսի պատկեր ինչպիսի տվել է Սնակը, չենք հանդիպի նույնիսկ Վարուժանի մոտ:

Սիամանթոյի հետ ընդհանուր համեմատականի մասին խոսելի հարկ է նշել, որ Սնակը փոքր – ինչ զիջում է մտքի գերկենտրոնացման տեսակետից: Ցավի ապրումների ներքին խորքը և տենչանքի ձգտումների այդ հակադրամիասնությունը Ռուբեն Սնակը չի բերում. դատումներն ավելի շատ են քան ապրումները: Սակայն այստեղ կա նաև բնույթի և բնավորության տարբերություն: Սնակի ձեռագրերը դիտելիս կարելի է հստակաբար ասել, որ գրողի միտքը խաղաղ է, ջնջումները նյարդային չեն: Սիամանթոյի ձեռագրերում նյարդային պոռթկումները ակնհայտ են և նրա ձեռագրերը վերծանելու համար հաճախ աշխատում են հզորագույն ձեռագրաբաններ:

Խոսելով Մեծարենցի և Սնակի ստեղծագործական համեմատական գծերի մասին՝ նշենք մեկ առանցքային հանգամանք. Սնակը չի ապրել մահվան այն

ծանր շունչը, որ հետապնդում էր Մեծարենցին, որը տենչում էր ապրել մարմնավոր սերը: Սա է հիմնական պատճառը, որ Սևակի շուրթերից ծնվում է «Ինչուն», ոչ թե «Սիրաձայն ընծյուղը»: Ռուբեն Սևակը բերում է երգը, բայց չի տանում այն մեծ շիկացումներին, որ տանում էր Մեծարենցը:

Դանիել Վարուժան, Սիամանթո, Միսաք Մեծարենց... Ռուբեն Սևակը գնում էր ընդհանրացնողի ճանապարհով, ինչը դժբախտաբար նրան չհաջողվեց: Ռուբեն Սևակը տեսակի անկրկնելիություն ունի և եթե նրան մտովի դուրս թողնենք գրական այն տիտանների շարքից ինչպիսին էին Վարուժանը, Սիամանթոն, արևմտահայ գրականության մեջ մնում է մի բաց, որը այլ կերպ անհնար է լրացնել:

Ռուբեն Սևակը առեղծվածային բանաստեղծ է և առեղծվածային էր այնքանով, որ իր ամբողջական խոսքը դեռ չէր ասել: Գրողի կյանքն ու խոսքը կիսատ էր: Սևակը դեռ կայացման ընթացքի մեջ էր: Եվ գրական որոնումների մեջ գտնվելով Սևակը անդրադարձել է չափածոյի տարբեր տեսակներին, նույնիսկ հեղինակել է արձակ գործեր (« Բժիշկին գիրքեն փրցված էջեր»): Սևակի ստեղծագործական մտածողության համար հիմնական գիծ է համարվում արտասովոր հակումը փիլիսոփայությանը: Հենվելով Նիցշեի վրա նա ժխտում է Նիցշեի մարդկային կյանքի վերաբերյալ ունեցած տեսությունը («Մարդերգություն»): Գրողը բերում է առողջ փիլիսոփայություն և առաջինն է, որ հայ գրականություն բերեց սիրո և սեռի հակադրականությունը:

Գրական մեծ ժառանգություն չի թողել Ռուբեն Սևակը. նրա ստեղծագործական հաշվեմատյանի մասն են կազմում հարյուր հիսունի չափ տարբեր ծավալի ստեղծագործություններ, որոնց մի մասը անտիպ է, ավելի քան երեք տասնյակ արձակ գործեր և նույնքան էլ նամակներ:

Բանաստեղծի կենդանության ժամանակ նրա ստեղծագործություններն առանձին հրատարակությամբ լույս են տեսել մեկ անգամ, 1910 թվականին՝ « Կարմիր գիրքը» ընդհանուր խորագրով: Բանաստեղծի վաստակի մասն այդպես էլ ցրված է մնացել պարբերական մամուլի էջերում: Սևակը ժամանակին ծրագրել էր հրատարակել բանաստեղծությունների հինգ շարքեր՝ « Կարմիր գիրքը», « Վերջին հայերը», «Քառսը», « Չհասկացվածները», « Սիրո գիրքը» : Նա հնարավորություն ունեցավ ամբողջացնելու և հրատարակելու միայն առաջինը: Սակայն պահպանված ձեռագրերից, ինչպես նաև մամուլում տպագրված առանձին բանաստեղծությունների վերաբերյալ հեղինակի առանձին նշումներից հնարավոր է գեթ մոտավոր կերպով կռահել մնացած շարքերի բնույթն ու բովանդակությունը: Նշված շարքերի մեջ «Սիրո գիրքը» ամենածավալունն է և հենց այդ շարքին էլ կանդրադառնանք այս հետազոտության մեջ: Այս շարքի առանձին բանաստեղծությունների վերլուծությանն անդրադառնալուց առաջ նախ խոսենք շարքի ընդհանուր գաղափարաբանության և գրության շարժառիթների մասին: Այս շարքը գաղափարական նոր էջ է բացում Սևակի ստեղծագործական ողջ ընթացքի մեջ: Սևակը, այս շարքում անդրադառնում է թերևս ամենից վեհ և

գեղեցիկ զգացման: Իսկ միթե Սեակի յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր տող զգացական չէ, և միթե՞ գրողի զգացմունքները չեն, որ արտահայտված են գրքում: Պատասխանը միանշանակ էր: Ռուբեն Սեակի կյանքի և ստեղծագործության վրա վճռորոշ նշանակություն է ունեցել մեծ սերը և համաշխարհային գրականության մեջ այդ սիրո արդյունքում ծնված նամակները, որոնք գերազանցում են ցանկացած սիրային գեղարվեստական երկի՝ սկսած արևելյան աշուղական սիրավեպերից մինչև իսկ Գյոթեի « Ֆաուստ»-ը: Այդ նամակները իրենց զգացմունքների մաքրությամբ, անկեղծությամբ, դրսևորման կերպերով գերազանցում են, որովհետև այդտեղ չկա հեղինակի միջամտությունը՝ սիրողը և գրողը ներքույլ են: «Ֆաուստ»-ում Գյոթեն շատ հեռու է և՛ Մարգարիտից, և՛ Ֆաուստից, Շեքսպիրը բավականին հեռու է և՛ Օֆելյայից, և՛ Համլետից, որովհետև Շեքսպիրը քննում է սիրո առաջացումն ու վարքաբանությունը, իսկ Սեակն ուղղակի ներկայացնում է այդ առեղծվածը իր սրտի ողջ թրթիռով ու ավյունով: Նամակներից բացի գրական այս հոգեբանությունը ինչ-որ չափով արտացոլված է նաև «Սիրո գիրք» շարքում, որտեղ ասես յուրաքանչյուր բանաստեղծություն շնչում է կյանքի և անաղարտ սիրո հանդեպ ունեցած պարզ ու պայծառ հավատով և ջերմությամբ: Այս ժողովածուն գաղափարական լրացումն էր մյուս երկու գրքերի և եկել էր ամբողջացնելու Սեակի բանաստեղծական աշխարհը՝ որպես գեղարվեստական մեկ միասնական գծի արտահայտություն: Իսկ ի՞նչ էր փորձում ասել Սեակը իր այս ժողովածուով: Ռուբեն Սեակը նահատակի խաչը ուսերին ասես փորձում էր այդ ծանր ժամանակաշրջանում, կեղեքիչ պայմաններում գտնել և բացահայտել ապրելու պատճառաբանվածությունը: Սեակը մահվան մեջ փնտրում էր կյանքի կենսական աղբյուրը: Եվ, իհարկե, կյանքի հիմնական շարժիչ ուժը սերն է: Ուշարժան է նաև մեկ այլ հանգամանք Սեակը մասնագիտությամբ բժիշկ էր, և մարմինը բժշկելուց զատ պետք է բժշկել նաև հոգին: Եվ «Սիրո գիրք»-ը ամբողջացնում է բանաստեղծի ստեղծագործությունը՝ որպես գաղափարական մեկ միասնական գծի արտահայտություն: Ցավ ի սիրտ, Սեակը հնարավորություն չունեցավ իր ձեռքով խմբագրել և հրատարակել այդ շարքը, այդ իսկ պատճառով շարքը գեղարվեստական տեսակետից չբարձրացավ այն աստիճանին ինչպիսի «Կարմիր գիրք»-ն էր: «Կարմիր գրքում» Ռուբեն Սեակ գրողը հանդես է գալիս որպես կատարվելիք դեպքերի անողոք քննադատ կամ դատավոր, իսկ արդեն « Սիրո գիրքը» ընթերցելիս մեր առջև ծնունդ է առնում իրական գեղագետը: Իրականության մեջ չգտնելով իր երազած մաքուր ու անբիծ մարդկային զգացմունքը, բանաստեղծը անձնատուր է լինում գեղեցիկի անուրջներին: Առհասարակ արևմտահայ գրականության մեջ երազի սինդրոմը ունի մեծ լայն կիրառություն, և Սեակը նույնպես իր ստեղծագործությունների մեջ հաճախակի է անցում կատարում դեպի անուրջը ասես միտում ունենալով այդ եղանակով մոռացնել տալ դաժան իրականությունը: Տպավորություն է ստեղծում, որ Ռուբեն Սեակը այս գիրքը միմիայն ներքող է ուղղված սիրուն և այդ սիրո առարկային, սակայն գրող ստեղծագործություններում ասես նշմարվում է ճանապարհ, որով մարդը կարող է հասնել մեծ ու իսկական կյանքի խորհրդին, երջանկության և կատարելության:

Այժմ անդրադառնանք շարքի առանձին բանաստեղծությունների քննությանը՝ քայլ առ քայլ բացահայտելով գեղագետ հեղինակին: Ներկայացնենք այս գրքի իմաստային, գաղափարական և ոճային առանձնահատկությունները «Ինչու », «Եկուր»,«Չար աղջիկը»,«Գինով սեր», «Սերով, սերով» բանաստեղծություններում:

Ի տարբերություն Ռուբեն Սնակի նախորդ երկու գրքերի, որտեղ բանաստեղծի իդեալը չէր երևում, այստեղ այդ իդեալն ամբողջությամբ ստանում է գեղեցիկ երազանքի ձև, որը պատկերավորվում և մարմնավորվում է այնքա՛ն գեղեցիկ և այնքա՛ն հուզառատ: «Չար աղջիկ»բանաստեղծության մեջ Սնակը հմուտ նկարչի նման վրձինը ձեռքին նկարում է մի կերպար, որ այդքան երկար փայփայել էր իր սրտում և մտքում.

Իմ սիրականս խարտյա՛շ, խարտյա՛շ,
Հուրերու պես խարտյա՛շ էր.
Իմ սիրականս մատղա՛շ, մատղա՛շ,
Ջուրերու պես մատղա՛շ էր...

Պատկերի առավել ամբողջական նկարագրի հանդիպում ենք բանաստեղծության հաջորդ տներում, որտեղ շարունակում է գծագրվել գեղեցիկ և խորհրդավոր աղջկա կերպար.

Վարդ փետտելեն՝ թաթիկն անույշ
Վարդերու գույնն էր առած.
Մարդ թունելեն՝ աչուկն անույշ
Մահերու թույնն էր առած...

Բայց կխնդար ան այնքա՛ն քաղցր՝
Որ զոհն ինք իսկ կնիրհե՛ր.
Ու կխնդար ան այնքա՛ն բարձր՝
Որ երկինքն իսկ կներեր...

Սնակի գովերգած սերը այստեղ ավելի քան զգացական է և այստեղ է, որ երևան է գալիս իրական գեղագետը: Եվ եթե բանաստեղծը հանդես է գալիս գեղարվեստի

անունից, պետք է կրողանա ստեղծել երգեր, որոնք կխոսեն մարդու ամենից գաղտնի և նվիրական երազանքների հետ: Մնակը հենց այդ բանաստեղծն է:

Բայց կխնդար ան այնքա՜ն քաղցր՝
Որ զոհն ինք իսկ կնիրհե՜ր.
Ու կխնդար ան այնքա՜ն բարձր՝
Որ երկինքն իսկ կներեր...

Եվ հանկարծ փոխվում է գործողությունների ընթացքը և այդքան պայծառ ու լուսավոր կտավի վրա գծագրվում է ինչ-որ մռայլ շղարշ: Հարկ է նշել, որ «Սիրո գրքում» մահվան ուրվականը ավելի հաճախադեպ է երևում հեղինակին. ավելին սերն ու մահը հաճախ հանդես են գալիս միասին, որպես կյանքի շարժիչ ուժեր համարվող երկու ազդակներ.

Ու մեռա՜վ փոքր աղջիկը չար.
-- Թռչնի պես կտրտնջար--
Թե խորհեր քիչ մը՝ անպատճառ
Աստված ինքն իսկ կզղջար...

Թե գիտենայի իր մեռնիլ՝
Թո՜ղ տայի զիս դեռ տանջեր.
Թե ինք գիտնար իր մեռնիլը՝
Զիս ալ իր հետ կկանչեր...

Բանաստեղծության շարունակությունը ունենում է առավել զգացական բնույթ և այստեղ է, որ հասունանում է դիմումը Աստծուն և մարդկանց.

Տե՜ր Դատավոր, ձեռքդ նրժար,
Մի փութար զայն դատելու.
Անոր արվեստն էր շա՜տ դժվար՝
Տանջեր... առանց ատելու:

Ես կհսկեմ աղջկան չար.

Մարմնին մետաքս հագցուցեք

Դրրեք մահճի մեջ սնդուսի

Ժապավենով տաքցուցե՛ք...

Եվ չնայած այս մռայլ շղարշին միևնույն է բանաստեղծության մեջ գերիշխում է այն տրամադրությունը, որ սերը այնքան զորեղ ու լուսավոր զգացում է, որ երբեմն մահն էլ է անզոր նրա դիմաց: Եվ, իհարկե, այդպիսին էր նաև Ռուբեն Սևակի և Յանի Ապելի սերը: Սեր, որը առավել քան ուժգին դարձավ նույնիսկ Սևակի եղեռնական մահից հետո.

Ես կհսկեմ աղջկան չար.

-Թե երկինքն իսկ չի զղջար,

Ձիս կհիշեր, ու անպատճառ

Մեռնելուն ինք կզղջար...

Սիրային քնարերգության բնագավառում Սևակի տաղանդավոր ժամանակակիցներն էին Մեծարենցն ու Վարուժանը: Մեծարենցի սերն այնքան նուրբ է ու շղարշոտ, որ հաճախ դժվար է ընկալել այն: Երազի նման է այդ սերը, որ եթե համակում էլ է մարդուն, ապա չի կարող տեղավորել նրա հոգու մեջ բնականի ապրումի անմիջականությամբ: Վարուժանի մոտ սերն ստանում է փիլիսոփայական երանգավորում. այն անհրաժեշտ մի ստուգան է մարդու՝ մինչև գեղեցիկի լիակատար ըմբռնումը բարձրանալու ճանապարհին: Վարուժանն երգում է ավելի շատ սիրո խորհուրդը, քան սերը որպես առօրյա երևույթ, որպես կենսաթրթիռ իրականություն: Այս իմաստով Սևակն ավելի մոտենում է Վարուժանին, բայց նրա երգերն ամենից առաջ հյուսված են իրական ու ապրված զգացմունքների նրբերանգներից, ուստի և յուրաքանչյուրի կողմից ընկալվում են իբրև սեփական հոգու արձագանք: Տեղին է մեջբերել Գ. Մխիթարյանի բնորոշումը Սևակին.« Սևակի սերը ոչինչ չունի եղերական, ո՛չ Դուրյանի ցավագին ճենճերումները, ո՛չ Մեծարենցի նրբին սարսուռները..., ո՛չ խորունկ եղերական սերեր, ո՛չ մահաշունչ հուսախաբություններ, այլ պարզ, մեկին, այսինքն իրավ սեր մը, որ հարազատ ու մտերիմ կրնա ըլլալ բոլորին: Սևակի սերը ծանոթ է բոլորին, այսինքն՝ սեր մը որ իմս ու քուկդ կրնա ըլլալ՝ իր երջանկության պահերով ու տարտամ ու հուսախաբ վայրկյաններով: Սեր մը որ երբեք առանձին չէ, ոչ ալ ամբողջ կյանք մը, այլ կյանքի մեկ մասը»:

Բյուրեղացած զգացմունքների երգիչ է Սևակը,իսկական քնարերգու, գիրք է նրա համար մարդկային հոգին՝ անթիվ էջերով, թաքուն սերերով և տառապանքով:

«Սերով, սերով» բանաստեղծության մեջ Սնակը նկարագրում է սիրո անհուն զգացողությունը և այդ սիրո մյուս կողմը՝ տառապանքն ու ցավը, որոնք շատ դեպքում անբաժան են սեր կոչված զգացումից: Հոգեկան նվիրվածության բարձրակետն է սա, երբ մարդն այլևս ոչ մի մխիթարություն չունի, բայց գիտակցում է, որ սիրում է.

Սերով, սերով խոցեցիր զիս,

Սիրտըս սերով խոցեցիր,

Սիրտըս ջահել՝ վարդի պես բաց,

Դազաղի պես գոցեցիր...

Դուն քաղցրությամբ խոցեցիր զիս,

Սիրտըս սերով լափեցիր,

Սիրտըս ջահել՝ վարդի պես բաց,

Մեկ համբույրով խաբեցիր...

Երգով, վերքով օրրեցիր զիս,

Սրտիս տատասկ ցանեցիր,

Ջահեր սրտիս վարդերը բաց,

Հոգին տվիր ցանուցիր...

Ռուբեն Սնակի ստեղծագործություններում ասես նշմարվում է ճանապարհ, որով մարդը կարող է հասնել մեծ ու իսկական կյանքի խորհրդին, երջանկության և կատարելության:

«Աստվածորեն ապրիլ»,- այս է բանաստեղծի իդեալը: Բայց և այնպես այդ իդեալը հեռու է, հաճախ նույնիսկ անհասանելի: Եվ բանաստեղծը չգտնելով այդ ճանապարհը իրականում ստիպված է դիմել անուրջին.

Եկո՛ւր, եկո՛ւր, ճամբաներեն անուրջիս,

Սրտիս ջահերն այրեցի քեզ ի հանդես,

Վերջին անցորդ տառապանքի կամուրջես,

Երգի մը պես, քրոջ մը պես, մոր մը պես

Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներեն անուրջիս...

Եկո՛ւր, ես քունդ եմ, քեզ արքա՛ ու գերի,

Ես, մեղապարտ անոթը սուրբ համբույրիդ...

Հնքս աղոթքի պես դեմքիդ շուրջ կ'դեգերի,

Պաշտամունքիդ ես խնկանոթ միամիտ:

Եկո՛ւր, ես քունկդ եմ, քեզ արքա ու գերի...

Այս սրտագեղ կանչը միայն սիրած էակին չէ որ ուղղված է, դրա մեջ ամփոփված են լավագույն կյանքի, անաղարտ սիրո կարոտը: Մերթ աղերսագին է նրա դիմումը, մերթ ամեն ինչ զոհաբերելու պատրաստակամությամբ լի, մերթ հնչում է պահանջի ուժգնությամբ, մերթ գութ հայցողի խոնարհությամբ: Այս տեսանկյունից կարևոր են բանաստեղծությունում առկա հակադրությունները.

Քու տաճարիդ ես քուրմ երգիչն եմ դողդոջ.

Ու դուն մարմինն ես անմարմին երգերուս,

Խենթեցընող հավերժահարսը բողբոջ,

Ցող մահացնող սրտի հազար վերքերուս.

Սուրբ տաճարիդ ես քուրմ երգիչն եմ դողդոջ...

Քու անունովդ պատանքեցին ծեր հոգիս,

Քեզ երգելեն արյունեցան, խենթեցան

Ցոթը վերքերն իմ բարունակ սրինգիս,

Սրտիդ ճամփուն վրա մերկ ոտներս այրեցան,

Քու անունովդ պատանքեցին ծեր հոգիս...

Այս զգացումները այնքան պարզ ու հստակ են՝ հարազատ ամեն մի հոգու և սրտի: Սեր, իդեալ և հոգի,- ահա այն գերագույն հատկանիշները, որոնք մարդուն իսկապես դարձնում են բնության ամենակատարյալ ստեղծվածը: Ու Սեակը ստեղծում է այդպիսի երգեր. «Գինով սեր», «Ինչո՞ւ»... բանաստեղծություններ, որոնց ամեն մի տողը զգացական է: «Գինով սեր» բանաստեղծությունը հոգեպարար մեղեդի է, երջանկությամբ ու ջահելությամբ լեցուն.

Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սերն ես.

Տարաշխարհի չքնաղ ծաղիկն ես աղվոր.

Միսթիքական խնկումներով թունավոր

Դուն մսեղեն խենթեցնող տաճարն ես.

Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սերն ես:

Սև մազերովդ սիրե՛զիս, զգվե՛զիս,

Անոնց խորհուրդը պատմե ինձ առանձին,

Որովհետև անոնք հոգիս կապեցին,

Իրենց ցանցին մեջ կապտեցին իմ հոգիս.

Սև մազերովդ սիրե՛զիս, զրգվե՛զիս:

Բանաստեղծության յորաքանչյուր տող ներբող է ուղղված սիրուն նզեղեցիկին: Եվ այդ ամենը այնքան կենդանի և համոզիչ է, որ ընթերցելիս թվում թե մեր ձեռքում է գտնվում մի սարք որի միջոցով կարող ենք տեսնել բանաստեղծի սրտի աշխատանքի պատկերը, յուրաքանչյուր հուզումն ու երջանկության պահը, որի ժամանակ սրտի աշխատանքի գծապատկերը անկարելի է պատկերել որևէ գծագրով.

Տրղու մը պես հանգչեցուր զիս կուրծքիդ վրա,

Հանգչեցուր զիս, ու այտերս կրակե

Քու ձյունեղեն բազուկներուդ մեջ գրկե,

Ու թող մարմինդ մարմնիս վրա սարսռա.

Տղու մը պես հանգչեցուր զիս կուրծքիդ վրա:

Ահա շրրթնե՛րս կարոտովդ կ՝այրին,

Ու կլայնա արտասուքի շիթ մը տաք

Իմ մթաստվեր թարթիչներուս շուքին տակ.

Անոնց վրա դուն ցո՛ղը դիր համբույրին,

Ահա շրրթնե՛րս կարոտովդ կ՝այրին:

Այս և մի քանի այլ բանաստեղծություններում ակնհայտ է Սևակի Հեթանոսական շարժմանն հարելու միտումը : Այս հանգամանքը արժանացել է բազում քննադատությունների: Խոսքը, իհարկե, մարմնավոր սիրո պատկերների առկայության մասին է: Գեղեցկության բարձրագույն արտահայտությունը, ըստ հեթանոսականների, մարմնական ու հոգեկան ուժերի ամենաբարձր ծաղկմանն հասած անհատն էր: Սակայն «Սիրո գրքի» այս տեսակ քերթվածները առաջին

հերթին աշխարհի և մարդու, կյանքի և գեղեցկության վերաբերյալ առ նոր հայացքների արտահայտությունն էին: Սևակը գերադասում է հետևել բնության անկեղծ և անմիջական ձայնին.

Բազուկներդ կգալարվին, կդառնան,

Տենչին կրակը նայվածքդ կթովե,

Որովհետև քու մութ հոգիդ գինով է,

Սիրախտավոր գիշերներուն պես գարնան...

Բազուկներդ կգալարվին, կդառնան:

Ժամն է, աղվո՛ր, երանության ժամն է սա.

Շրթներուս վրա դիր շրթունքնե՛րդ բոցե,

Մոռցի՛ր կյանքը, աղվոր աչքերդ ալ գոցե...

Ի՞նչ, կ՚արտասվե՞ս, ու հուզումեդ կդողա՞ս.

Ժամն է, աղվո՛ր, երանության ժամն է սա...

Սևակի սիրո բանաստեղծությունները ընթերցելիս սկսում ես խորհել բանաստեղծի հետ: Այս գիծը բնութագրական է Սևակի ամենակատարյալ գործերից մեկի՝ «Ինչու՞» բանաստեղծության համար: Առաջին հերթին բանաստեղծությունը կարեկցանք սիրո համար անպատրաստ «փոքրիկ աղջկան» ուղղված, ում սերը անկարող է դիմանալ սիրո փոթորկումներին: Մյուս կողմից բանաստեղծության մեջ շատ խորը արտահայտված է զգացմունքի և անհատի փոխհարաբերությունը, դեպի գեղեցիկը և կատարյալը ձգտելու բնության կանչին հետևողական լինելը և դրա պատճառով հաճախ կործանմանն եզրին կանգնելը.

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,

Փոքրի՛կ աղջիկ, քեզի մե՛ղք էր.

Փոքրիկ ծոցիդ թիթե՛ռ պետք էր,

Դուն ծե՛ր արծիվ մը բանտեցիր...

Սևակի այս բանաստեղծությունում ծնունդ է առնում բնության մեծագույն և հավիտենական գաղտնիքներից մեկը: Ինչու՞ են մարդիկ հաճախ իրենց համար բախտի ուղեկից ընտրում «ծեր արծվին» և դիմագրավելով բազում փորձություններ միևնույն չեն հրկնչում: Թերևս մարդկային մտածողության

ամենից հակասական կողմերից է, որ՝ հասնել հաջողության, անկախ նրանից, թե ինչքան դժվար է դրան հասնելու հանապարհը.

Կապույտ աչվիդ երբ որ բացիր,
Կապո՛ւյտ աղջիկ՝ պլպուլն երգ է՛ր.
Քե՛զ ալ սիրո մրմունջ պետք էր,
Դուն գուժկան մռո՛ւնչս ընտրեցիր...

Ես կ՚երթամ մի՛շտ, անծայրածի՛ր
Դամբաններ են ոտքիս հետքե՛ր.
Քեզ սիրո մեղմ սյո՛ւք մը պետք էր,
Դուն փոթորկի՛ն կուրծքդ բացիր...

Կ՚այրի՛ն աչերդդ սևածիր,
Պիտի մեռնի՛ս, այդպես մ՚երգեր.
Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն Սեր-Աստվածը սիրեցիր...

Հարկ է նշել, որ բանաստեղծությունը ամբողջությամբ բխում է Սևակի կենսափիլիսոփայությունից և բանաստեղծը ուզում է մարդուն տեսնել անչափ երջանիկ:

Այսպիսով՝ ամփոփելով խոսքս նշեմ, որ սիրո թեման հավերժական է և այս զգացմունքի մասին գրվել են և դեռ շատ կգրվեն բանաստեղծություններ և ոչ միայն, սակայն Ռուբեն Սևակը իր զգացական աշխարհով միշտ էլ կառանձնանա և կունենա իր տեղը հայ գրականության երկնակամարում: